



Աջակցություն Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումին. քաղաքական երկխոսության և քաղաքացիական հասարակության դերակատարների ամրապնդում

Իրականացման 01.03.2021 - 31.12.2023
Ժամանակահատված:

ԱԼԳ երկրներ:
Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 4 500 000

Ընդհանուր բյուջե: € 4 700 000



EASTERN PARTNERSHIP CIVIL SOCIETY FORUM

Նախագծի կայքէջ: eap-csf.eu/

Նախագծի նկարագրություն

Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումը (ԱԼԳ ԶՀՖ) քաղաքացիական հասարակության յուրատեսակ բազմաշերտ տարածաշրջանային հարթակ է, որն ուղղված է եվրոպական ինտեգրման խթանմանը և բարեփոխումների ու ժողովրդավարական փոփոխությունների դյուրացմանը Արևելյան գործընկերության վեց երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում: Գործելով Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության հարթությունում՝ ԱԼԳ ԶՀՖ-ն տարածաշրջանում ձգտում է ամրապնդել քաղաքացիական հասարակությունը, հանրային խոսույթում և քաղաքականության մշակման մեջ խթանել բազմակարծությունը՝ նպաստելով մասնակցային ժողովրդավարությանը և հիմնարար ազատություններին:

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ:
facebook.com/EaP.Civil.Society.Forum,
https://twitter.com/eapcsf, instagram.com/eapcsf/,
linkedin.com/company/eastern-partnership-civil-society-forum, youtube.com/user/EAPCSF2012,

Ակնկալվող արդյունքներ:

- ԱԼԳ ԶՀՖ-ն մասնակցում է ԱԼԳ շրջանակներում իրականացվող միջոցառումներին և սեփական ներդրումն ունենում դրա կայացման մեջ.
- Մոնիտորինգային հաշվետվությունները և ծրագրային փաստաթղթերը հնարավորություն են տալիս իրականացնել ապացույցների վրա հիմնված շահերի պաշտպանություն և ներկայացնել որակյալ առաջարկություններ.
- ԱԼԳ համաթիվը գործում է որպես ԱԼԳ մոնիտորինգի առաջնակարգ գործիք՝ քաղաքականություն մշակողների և այլ շահագրգիռ կողմերի համար.
- Ամրապնդվել են ԱԼԳ ԶՀՖ անդամ կազմակերպությունների քաղաքական երկխոսության և մոնիտորինգի հիմնական հմտությունները.
- ԱԼԳ քաղաքացիական հասարակության ֆորումը գործում է որպես ներառական, արժեքահեն կազմակերպություն, որն արդյունավետորեն զարգացնում և օգտագործում է իր անդամների փորձը: